ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

13

«Իրավաբանական լրատուն» պարբերական է, որը նպաստում է արդի իրավական մշակույթի ձևավորմանը

2007թ. հունիս, թիվ 6 (13)

ԱՂՔԱՏՆԵՐԸ ՀՈՒՅՍԸ ԴՆՈՒՄ ԵՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԸ ՅՈԼԱ ԵՆ ԳՆՈՒՄ ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅԱՄԲ:

ԲՐԵԽՏ

Յուրաքանչյուր քաղաքացի իր երկրում կարող է ապրել կենսական դժվար և վատթար պայմաններում միայն այն դեպքում, երբ համոզված է, որ դրանք անցողիկ են՝ իր մտքում ունենալով այն վեհ արժեքներն ու գաղափարները, որոնց համար կրում է ժամանակավոր այդ դժվարությունները: Քաղաքացին, ապրելով վատ պայմաններում, պետք է համոզված լինի, որ իր հայրենիքում յուրաքանչյուր վայրկյան կարող է արդարություն գտնել: Նույն քաղաքացին չի կարողանա ապրել արժանապատիվ կենսական պայմաններում, եթե սեփական երկրում չկարողանա տեր կանգնել և պաշտպանել իր սեփական իրավունքները, սատարել իր ընտանիքի, մտերիմների ու ընկերների խախտված իրավունքների օրինական վերականգնմանը: Այս պարագայում քաղաքացին իրեն կզգա լքված, անպիտան իր հայրենի բնօրրանում, և Մարդու իրավունքների եվրոպական դատարանից ակնկալվող արդարությունը, նյութական ու բարոյական վնասների հատուցումը ոչ մի դեպքում չի կարողանա փոխարինել այն արդարության զգացողությանը, որը քաղաքացին կարող էր գտնել սեփական հայրենիքում: Ուստի, այսօրվա հրամայականն է Հայաստանում իրականացնել երկրորդ սերնդի բարեփոխումներ, և այդ բարեփոխումների իրականացումը սկսել դատաիրավական համակարգից: Համակարգ, որը կոչված է ապահովել հայրենի երկրում արդարություն փնտրող յուրաքանչյուր քաղաքացու այն հույսով, որ նա կգտնի այդ արդարությունը:

ԼՐԱՀՈՍ

ՀԱՄԱՐԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

Իրավաբանական լրատուն հարցազրույց է անցկացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր տիկին Ալվինա Գյուլումյանի հետ: Հարցազրույցը՝ էջ 4-5-ում:

ՕՐԵՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԻՐԱՌՈՒՄ

«Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի կիրառման պահից մինչ այժմ ՀՀ պետբյուջե է գանձվել 1 միլիարդ 646 միլիոն դրամ: Օրենքի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիները զորակոչին (օրենքի խախտմամբ) չներկայանալու պահից մինչև 27 տարին լրանալը, սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելը կամ տարկետման իրավունք ստանալը յուրաքանչյուր զորակոչին չզորակոչվելու դիմաց պետք է մուծեն համապատասխան վճարներ: Օրենքի կիրառման պահից որոշում է կայացվել սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինծառայություն չանցած 2 հազար 421 քաղաքացիների նկատմամբ:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ

ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանիհունիսի 7-ի հրամանագրով Սերժ Սարգսյանը կրկին նշանակվել է ՀՀ վարչապետ: Նախագահի հունիսի 8-ի հրամանագրերով ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը վերանվանվել է Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության, իսկ ՀՀ կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեն վերակազմակերպվել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության: Մեկ այլ հրամանագրով նշանակվել են ՀՀ կառավարության անդամները: ՀՀ արդարադատության նախարար է նշանակվել Գևորգ Դանիելյանը, որը մինչ այդ զբաղեցնում էր ՀՀ Գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնը:

ՉՈՐՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ

2007թ.-ի հունիսի 7-ին մեկնարկել է չորրորդ գումարման Ազգային ժողովի առաջին նստաշրջանը: ԱԺ նախագահ է ընտրվել Տիգրան Թորոսյանը, փոխնախագահներ՝ Վահան Հովհաննիսյանը և Իշխան Զաքարյանը, Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ է ընտրվել Արևիկ Պետրոսյանը, Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ է ընտրվել Դավիթ Հարությունյանը: ԱԺ մյուս յոթ մշտական հանձնաժողովների նախագահներ են ընտրվել Ավետ Ադոնցը, Արմեն Ռուստամյանը, Հրանուշ Հակոբյանը, Արթուր Աղաբեկյանը, Արա Բաբլոյանը, Վարդան Այվազյանը և Գագիկ Մինասյանը:

ՀԱՄԱԼՐՈՒՄ

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչությունն այս տարվա ընթացքում կհամալրվի 228 լրացուցիչ քննչական աշխատակիցներով, այդ թվում՝ դատախազության քննչական ապարատի մեծ մասը ոստիկանության քննչական գլխավոր վարչություն տեղափոխելու հաշվին՝ դատաիրավական բարեփոխումների ներկա փուլի արդյունքում:

ՓՈԽԱՏԵՂՈՒՄ

ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի 2007թ.-ի հունիսի 6-ի հրամանագրով Արմեն Թումանյանը նշանակվել է ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահ՝ դադարեցնելով ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի դատավորի լիազորությունները: Նախագահի մեկ այլ հրամանագրով Միշա Ասատրյանը նշանակվել է ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի դատավոր՝ դադարեցնելով ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահի լիազորությունները:

ՆՇԱՆԱԿՎԵԼ ԵՆ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱԲԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը մայիսի 31-ին հրամանագիր է ստորագրել ՀՀ Գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի անդամներ նշանակելու մասին: ՀՀ Նախագահի հրամանագրով էթիկայի հանձնաժողովի իրավաբան անդամներ են նշանակվել ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ Հենրիկ Դանիելյանը, ՀՀ Նախագահի օգնական Գևորգ Մեհրյանը, ՀՀ Կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Տիգրան Բարսեղյանը և ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի անդամ Արա Նազարյանը:

«2007Թ.-Ի Ֆ. ՋԵՍԱՓԻ ԱՆՎԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱՏԱԽԱՂ» ՄՐՑՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2001 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետության իրավաբան ուսանողները ևս հնարավորություն ունեն ընդգրկվել այն համընդհանուր ոգուն, որ կոչվում է Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ: Մրցույթը աշխարհի հարյուրից ավելի երկրներում միավորում է երիտասարդ իրավաբաններին և հնարավոր դարձնում նրանց կայացումը միջազգային իրավունքի բնագավառում, պատրաստում նրանց որպես հմուտ բանախոսներ:

2007 թվականի փետրվարի 10-ից 11-ը կայացավ «2007 Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլը: Այն կազմակերպվել էր Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի, Հայաստանի իրավաբանական հիմնադրամի և «ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերության կողմից՝ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան և մի շարք այլ կազմակերպությունների աջակցությամբ: Այս տարի մրցույթի անցկացմանն իր աջակցությունն էր ցուցաբերել նաև ՀՀ Դատական դեպարտամենտը, որը մրցույթի բանավոր փուլի անցկացման համար տրամադրել էր տարածք Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանում՝ մրցույթի նախնական մրցափուլերի անցկացման նպատակով:

«2007թ.-ի Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի թեման վերաբերում էր միջազգային կազմակերպություններում պետության անդամության հարցին: Համաձայնագրում քննարկման առարկա էին ոչ անդամ պետությունների հանդեպ միջազգային կազմակերպության պարտականությունների շրջանակները, ինչպես նաև անդամ պետությունների իրավունքներն ու պարտականությունները ոչ անդամ պետությունների հանդեպ, արծարծված էին նաև միջազգային կազմակերպությունների և նրանց ոչ անդամ պետությունների միջև ծագած տարաձայնությունների լուծման համապատասխան մեխանիզմներին վերաբերող հարցերը:

Այս տարի մրցույթին մասնակցության հայտ էին ներկայացրել 10 թիմեր՝ երևանյան և ՀՀ մարզերի բուհերից: Սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ թիմերի կողմից ներկայացված գրավոր աշխատանքները ստուգվեցին մրցույթի դատավորների կողմից, որոնց կազմում ընդգրկվել էին միջազգային իրավունքի ոլորտում Հայաստանի լավագույն մասնագետներ՝ տարբեր պետական ու ոչ պետական մարմինների աշխատակիցներ, փաստաբաններ: Թիմերի անդամների համար անցկացվեցին գրավոր և բանավոր փաստաբանական հմտություններին վերաբերող սեմինարները, որոնք օգնում են մրցույթի մասնակիցներին իրենց գրավոր աշխատանքները սահմանված պահանջներին համապատասխան կազմելու և մրցույթի բանավոր մրցափուլում հնարավորինս լավ հանդես գալու գործում:

Մրցույթի եզրափակիչ մրցափուլին որպես դատավորներ այս տարի հրավիրված էին ՀՀ Արտաքին գործերի նախարարության աշխատակազմի ղեկավար Շահեն Ավագյանը, ՀՀ ԱԺ աշխատակազմի օրենսդրության վերլուծության վարչության պետի տեղակալ, ՀՀ արդարադատության 2-րդ դասի պետական խորհրդական Վրեժ Գասպարյանը և ՀՀ Գլխավոր դատախազության միջազգային իրավական հարաբերությունների վարչության ղեկավար Նելլի Հարությունյանը:

«2007թ.-ի Ֆիլիպ Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի հայաստանյան մրցափուլի հաղթող ճանաչվեց Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը ներկայացնող թիմը: Լավագույն հայցադիմում ճանաչվեց նույն համալսարանի թիմի հայցադիմումը, իսկ թիմի ներկայացուցիչ Արա Խզմալյանը ճանաչվեց հայաստանյան մրցույթի լավագույն բանախոս:

Մրցույթի վերջում կայացավ մրցանակաբաշխություն, որի ընթացքում մասնակիցներին և մրցանակակիրներին Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի նախագահ, փաստաբան Կարեն Զաղոյանի և մրցույթի ազգային կառավարիչ Լուսինե Աբգարյանի կողմից շնորհվեցին համապատասխան վկայականներ: Մրցույթի եզրափակիչին ներկա էր Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար պարոն Թոմաս Միքնախտը, որը մրցանակաբաշխության ժամանակ շնորհավորեց թիմերին, հաջողություն մաղթեց հաղթողներին և հույս հայտնեց, որ ԱՄՆ-ում կայանալիք միջազգային մրցափուլում հայաստանը ներկայացնելիս հաղթող թիմը կունենա ավելի լավ արդյունքներ: Եզրափակիչի ժյուրիի նախագահ, ՀՀ Արտաքին գործերի նախարարության աշխատակազմի ղեկավար պարոն Շահեն Ավագյանը իր ելույթում նշեց, որ հաղթող և պարտվող այս մրցույթում չի լինում, այն հավասարապես կարևոր է երկու թիմերի համար էլ՝ որպես մի գործընթաց, որը թույլ է տալիս լուրջ մասնագիտական զարգացում ապրել միջազգային իրավունքի ասպարեզում: Նա պատրաստակամություն հայտնեց թիմերին աջակցել գրականության ձեռքբերման հարցում՝ հնարավորություն տալով օգտվել ՀՀ Արտգործնախարարության գրադարանից:

Մրցույթի հայաստանյան մրցափուլում հաղթող ճանաչված Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը ներկայացնող թիմը 2007թ.-ի մարտի 25-ից ապրիլի 1-ը Վաշինգթոնում մասնակցեց միջազգային մրցափուլին՝ ներկայացնելով Հայաստանը:

Միջազգային փուլում հայաստանյան թիմը հանդես է եկել չորս նախնական մրցափուլերում՝ երկուական անգամ որպես հայցվոր և պատասխանող: Որպես հայցվոր հայաստանյան թիմը հանդես է եկել Լեհաստանի ու Կանադայի համալսարանները ներկայացնող թիմերի հետ և ճանաչվել է հաղթող: Որպես պատասխանող՝ այն հանդես է եկել Մեքսիկան ու Բելգիան ներկայացնող թիմերի հետ և կրել է պարտություն: Այս տարվա Ջեսափի մրցույթում հայաստանյան թիմը 94 թիմերի շարքում գրավեց 54-րդ տեղը: Յուրաքանչյուր տարի մրցույթին ներկայացող թիմերի հայցադիմումները, որոնք իրենց երկրում ճանաչվել են լավագույնը, մասնակցում են Հարդի Դիլլարդի հայցադիմումների մրցույթին: Հարդի Դիլլարդի լավագույն հայցադիմումների մրցույթում հայաստանյան թիմի գրավոր աշխատանքը այս տարի գրավել է 33-րդ տեղը՝ 94 գրավոր աշխատանքների շարքում:

Պետք է նշել, որ այս ցուցանիշը առաջընթաց է նախկին տարիների համեմատությամբ: Ավելի լավ արդյունք մեր թիմերը ունեցել են միայն մեկ անգամ՝ 2004 թվականին, երբ ԵՊՀ-ի թիմը մրցույթի միջազգային մրցափուլի 94 թիմերի շարքում գրավեց 52-րդ տեղը: Սա այն բանի վկայությունն է, որ մրցույթը ամեն տարի թեկնոխում է կայացման նոր փուլ՝ Հայաստանում արմատավորվելով որպես ավանդույթ և բերելով բարելավված արդյունքներ:

«2007թ.-ի Ֆ. Ջեսափի անվան միջազգային իրավունքի դատախաղ» մրցույթի՝ Ջեսափի գավաթի Շերմանի և Սթերլինգի աշխարհի առաջնության եզրափակիչ փուլ էին անցել Սիդնեյի համալսարանը (Ավստրալիա) և Լոնդոնի Քինգս քոլեջը (Միացյալ Թագավորություն) ներկայացնող թիմերը: Եզրափակիչ փուլում հաղթող է ճանաչվել Սիդնեյի համալսարանի թիմը (Ավստրալիա), իսկ եզրափակիչ փուլի լավագույն բանախոս՝ նույն թիմի բանախոս Լուկաս Բաստինը: «Ջեսափի Ոգին» մրցանակը շնորհվել է Լեսոտոյի ազգային համալսա-

բանը ներկայացնող թիմին:
Յուրաքանչյուր տարի մրցույթի կազմակերպիչները փորձում են ավելի բարելավել մրցույթի պայմաններն ու բարեփոխել կանոնները՝ հաշվի առնելով մասնակիցների կարծիքները: Մասնակիցները նշում են մի քանի դժվարություններ, որոնց հանդիպում են թիմերը միջազգային մրցափուլում: Օրինակ՝ չնայած այն հանգամանքին, որ միջազգային փուլում թիմերի մրցելույթների գրաֆիկը շատ ավելի ազատ է, քան ազգային փուլում, այնուամենայնիվ, քանի որ թիմերի զգալի մասը բնակվում են մրցույթների անցկացման վայրից որոշ հեռավորության վրա, նրանց համար որոշակի անհարմարություններ են ստեղծվում հանդիպումներին հաճախելու առումով:
Մյուս դժվարությունը վերաբերում է կազմակերպիչների հետ շփումներին. եթե ազգային փուլում կազմակերպիչները գրեթե միշտ հասանելի են թիմերի համար և ընթացիկ խնդիրներն արագ լուծում են ստանում, ապա միջազգային փուլում հաճախ անհնար է անմիջապես հաղորդակցվել պատասխանատու անձանց հետ, և հարցի ճշտումը կարող է երկար ժամանակ խլել: Այդ իսկ պատճառով թիմերը հնարավորություն ունեն կազմակերպիչների հետ ճշտել միայն ամենակարևոր և անհետաձգելի հարցերը:
Ամենամեծ խնդիրը, որի առաջ են կանգնում հայաստանյան թիմերը միջազգային փուլում, լեզվի խնդիրն է: Հակառակորդ թիմերի մեջ շատ են անգլիալեզու, ինչպես նաև անգլերենին՝ ինչպես մայրենի լեզվի տիրապետող թիմերը: Թարգմանչի միջոցով հանդես գալու հնարավորությունը չափազանց թանկարժեք է և, ցանկացած դեպքում, բացասական ազդեցություն է թողնում բանավոր ելույթի ընդհանուր որակի (ժամանակի կորուստ, թարգմանչական սխալների արդյունքում առաջացող թյուրիմացություններ) և դատավորների կողմից ընկալման վրա (որոշ դատավորների կողմից թարգմանության օգտագործումը դիտվում է որպես բացասական գործոն): Այս խնդիրը գոնե մասնակիորեն լուծելու համար անհրաժեշտ է կարդալ մեծ ծավալի անգլիալեզու իրավաբանական գրականություն և աշխատել բանավոր անգլերեն խոսքի վրա:
Այս և մի շարք այլ խնդիրների լուծման, ինչպես նաև միջազգային իրավունքի բնագավառում երիտասարդ իրավաբանների կայացման նպատակով Հայաստանում Ջեսափի մրցույթի կազմակերպիչների կողմից հիմնադրվեց Հայաստանի Ջեսափի ակումբը:
2007թ.-ին Հայաստանի Ջեսափի ակումբի գործունեության առաջնային ուղղություններից եղավ մրցույթի մասսայականացումը, որը հանդիսանում է ակումբի կանոնադրական նպատակ: Այս նպատակի իրականացման նպատակով 2007թ.-ի գարնանը այցելություններ կազմակերպվեցին բազմաթիվ բուհեր՝ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում: Ջեսափի ակումբի համակարգող Արփինե Եղիկյանը հանդիպումներ ունեցավ Երևանի և Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի մարզերի բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների հետ: Հանդիպումները կայացան Գյումրիում՝ «Պրոգրես» համալսարանի, «Հայբուսակ» ինստիտուտի Գյումրիի մասնաճյուղի, Երևանի Մենեջմենթի համալսարանի Գյումրիի մասնաճյուղի, «Իմաստասեր Անանիա Շիրակացի» համալսարանի, Ռուս-հայկական ժամանակակից հումանիտար համալսարանի Գյումրիի մասնաճյուղի, Վանաձորում՝ «Մխիթար Գոշ» համալսարանի, Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական համալսարանի, Գավառում՝ Գավառի պետական համալսարանի և Երևանում՝ երևանյան 14 բուհերի իրավաբան-ուսանողների հետ:
Հանդիպումների ընթացքում ուսանողներին ներկայացվեց մրցույթը, մրցույթի ստեղծման պատմությունը աշխարհում և Հայաստանում, հայաստանյան թիմերի կողմից մրցույթին մասնակցության կարգը: Բոլոր բուհերի ուսանողներին բաժանվեցին մրցույթի վերաբերյալ գրքույկն ու Ջեսափի ակումբի լրատուները: Հանդիպումները հնարավորություն ընձեռեցին նաև պարզաբանելու այն խնդիրները, որոնք խոչընդոտում են իրավաբան-ուսանողներին մասնակցելու մրցույթին: Խնդիրներն ունեին և սուբյեկտիվ, և օբյեկտիվ հիմքեր, սակայն հիմնական խնդիրներից էր մրցույթի մանրամասների չիմացությունը, բուհերի մեծ մասում միջազգային իրավունքի մասնագետների բացակայությունը, ինչն էլ ծնում է ուսանողների անվստահությունը սեփական ուժերի նկատմամբ: Այս այցելությունները ցույց տվեցին, որ երիտասարդ իրավաբանները իսկապես հետաքրքրված են մրցույթով և հետևողական են իրենց գիտելիքների և հմտությունների զարգացման հարցում:
Այսպիսով՝ Ջեսափի մրցույթը Հայաստանում տարեցտարի ավելի է կայանում, ինչի մասին վկայում են մեր թիմերի արդյունքները, երիտասարդ իրավաբանների աճող հետաքրքրությունը մրցույթի նկատմամբ, Ջեսափի ակումբի շրջանակներում տարվող աշխատանքները և բուհերի կողմից մրցույթի կարևորության գիտակցումը: Գաղտնիք չէ, որ այսօր հրամայական է միջազգային իրավունքի բնագավառում կայացած մասնագետներ ձևավորելու խնդիրը, որը միայն բուհական կրթությամբ դժվար է լուծել: Ուստի, այս և մի շարք այլ կարևոր նպատակների իրականացման համար է, որ տարիներ շարունակ Ջեսափի մրցույթի կազմակերպիչները անշահախնդրորեն իրենց ջանքերը, ժամանակն ու փորձն են ներդնում Հայաստանում մրցույթի զարգացման ու կայացման գործում: Համոզված ենք, որ շուտով հայ երիտասարդները չեն ունենա այն բարդությունները, որոնց այժմ հանդիպում են մրցույթի ընթացքում և հայաստանյան թիմերը արժանի և ուժեղ մրցակիցներ կլինեն Ջեսափի մրցույթի միջազգային փուլերում:

ԱՐՓԻՆԵ ԵՂԻԿՅԱՆ
իրավաբան,
Հայաստանի Ջեսափի ակումբի համակարգող

ՈՐՔԱՆՈՎ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԵՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ՝ ԱՅԴՔԱՆՈՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ Է ԵՐԿՐՈՒՄ

ԱԼՎԻՆԱ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր

Ծնվել է 1956թ.-ի հունվարի 20-ին,

1972-ից 1979թ.-ը ստացել է իրավաբանական կրթություն Երևանի Պետական Համասարանում,

1979-ից 1985թ.-ը եղել է փաստաբան, Փաստաբանների միության անդամ,

1985-ից1996թ.-ը եղել է Գերագույն դատարանի դատավոր,

1996-ից 2003թ.-ը եղել է ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր,

1997-ից 1999թ.-ը հանդիսացել է Դատահրավական բարեփոխումների պետական հանձնաժողովի անդամ,

1998-ից 2001թ.-ը հանդիսացել է Սահմանադրական բարեփոխումների պետական հանձնաժողովի անդամ,

1998-ից 2003թ.-ը եղել է Դատավորների խորհրդի նախագահ,

2003թ.-ի ապրիլի 2-ից մինչ օրս հանդիսանում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավոր:

-Տիկին Գյուլումյան, որո՞նք են ներկայումս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առջև ծառացած խնդիրները, և, այս առումով, արդյո՞ք այն ունի բարեփոխումների կարիք:

-Հայտնի է, որ Եվրոպական դատարանի ստեղծման պահին դատարանի իրավազորությունը տարածվում էր միայն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի հիմնադիր անդամ 10 երկրների վրա: Այժմ Կոնվենցիայի Բարձր պայմանավորվող կողմ են հանդիսանում 46 պետություն, և այդ երկրների ավելի քան 800 միլիոն բնակիչներից յուրաքանչյուրն իր խախտված իրավունքի պաշտպանության համար կարող է ուղղակիորեն դիմել միջազգային այս դատական մարմնին: Եվրոպայի խորհրդի ընդլայնումը հանգեցրել է դատարանի վարույթում գտնվող գործերի քանակի էական աճի և այժմ արդեն դատարանի վարույթում են գտնվում շուրջ 90000 չքննարկված դիմումներ: Դիմումների ահագնացող քանակը գործնականում անհնարին է դարձնում դրանց ժամանակին և արդյունավետ քննարկումը, ինչն էլ կարող է նվազեցնել դիմողների վստահությունը դատարանի նկատմամբ և վնասել դատարանի հեղինակությանը: Ուստի այսօր դատարանի առջև ծառացած գերխնդիրն է ապահովել կուտակված գործերի և նոր ստացվող դիմումների քննարկումը պատշաճ ժամկետներում: Այս առումով դատարանն, անշուշտ, բարեփոխումների կարիք ունի, և այդ ուղղությամբ ձեռնարկվել և ձեռնարկվում են անհրաժեշտ քայլեր: Առաջին հերթին, իհարկե, դատարանն էլ իր հնարավորությունների սահմաններում ամեն ինչ անում է իր ամենօրյա գործունեությունը բարելավելու և աշխատանքն առավել արդյունավետ դարձնելու համար: Բայց դա բավարար չէ, քանի որ դատարանը կաշկանդված է Եվրոպական կոնվենցիայի դրույթներով, և անհրաժեշտ է բարեփոխել Կոնվենցիան, ինչպիսի քայլ արդեն արված է: Եվ Դատարանի աշխատանքը զգալիորեն կարող է բեռնաթափվել, եթե ուժի մեջ մտնի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական Կոնվենցիայի 14 Արձանագրությունը: Այդ Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ է, որ այն վավերացնեն Կոնվենցիայի կողմ հանդիսացող բոլոր երկրները, և այսօր արդեն չի վավերացրել միայն Ռուսաստանը:

-Որո՞նք են, ըստ Ձեզ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից 2007թ.-ին կայացրած հասարակական մեծ հնչեղություն ունեցող որոշումները, և այս համատեքստում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ հարցերով եվրոպական դատարան դիմած գործերով ո՞ր երկրներն են համարվում «առաջատարներ»:

-Կարելի է ասել, որ Եվրոպական դատարանի յուրաքանչյուր որոշում հասարակական որոշակի հնչեղություն է ստանում առնվազն այն երկրում, որի վերաբերյալ այն կայացվել է, ուստի դժվար է առանձնացնել որևէ վճիռ: Իհարկե կան կրկնվող գործեր, որոնցով կայացված վճիռները կարծես սովորական են դառնում և կարևոր են միայն դիմողի համար, բայց կան վճիռներ որոնք, տալով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի դրույթների մեկնաբանություններ, զարգացնում են Կոնվենցիան՝ որպես «կենդանի» փաստաթուղթ և սահմանում են մարդու իրավունքների պաշտպանության համաեվրոպական ստանդարտներ: Վերջին խումբ վճիռները, որոնք ունեն նախադեպային նշանակություն, կարևոր են ոչ միայն այն երկրի համար, որի նկատմամբ կայացվել են, այլ նաև եվրոպական մյուս երկրների համար: Դրանց հետևելու դեպքում հնարավոր է և խուսափել նմանօրինակ սխալներից, և եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումը հաշվի առնելով՝ կատարելագործել սեփական օրենսդրությունը: Այս առումով պետք է կարևորել եվրոպական դատարանի նախադեպային նշանակություն ունեցող որոշումների հայերեն թարգմանությունն ու հրապարակումը, իսկ Հայաստանի վերաբերյալ որոշումներն ուղղակի անհրաժեշտ է թարգմանել և հրապարակել:
Դժվար է նաև մարդու իրավունքների խախտումների առումով որևէ երկրի «առաջատար» համարել, որովհետև պետք է նկատի ունենալ ազգաբնակչության թիվը, եվրոպական դատարանի մասին քաղաքացիների տեղեկացվածությունը, համակարգային խախտումների առկայությունը և այլն: Կարող եմ նշել այն երկրները որոնցից առավել մեծ թվով դիմումներ են ստացվում: Դրանք են՝ Ռուսաստանը, Թուրքիան, Ռումինիան, Ուկրաինան, Լեհաստանը, Չեխիան, Գերմանիան, Ֆրանսիան, Իտալիան, Բուլղարիան և Սլովենիան:

-Ինչպիսի՞ն է Հայաստանից մուտք արված գործերի պատկերը, և այս առումով (մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից) ներկայումս արդյո՞ք

արդյունավետ է իրականացվում արդարադատությունը ՀՀ-ում:

-Արդարադատությունն իմ կարծիքով հենց մարդու իրավունքի պաշտպանությունն է, և որքանով պաշտպանված են մարդու իրավունքները, այդքանով արդարադատությունն արդյունավետ է երկրում: Եթե մարդուն դատապարտում ես նրա կատարած հանցանքի համար, բայց միաժամանակ խախտում ես նրա իրավունքները, ապա իրականացնում ես ոչ թե արդարադատության, այլ զուտ պատժիչ ֆունկցիա: Բայց պետությունը ոչ միայն չպետք է խախտի մարդու իրավունքներն ու ազատությունները, այլև հաճախ պարտավոր է պայմաններ ստեղծել դրանց իրացման համար: Միայն եվրոպական դատարան մուտք եղած դիմումների թիվը կամ դրանցում մատնանշված խախտումները, անգամ կայացված վճիռները բավարար չեն երկրում արդարադատության իրականացման արդյունավերությունը գնահատելու համար: Ես կգերադասեի գնահատական չտալ մեր երկրում արդարադատության արդյունավետությանը, քանի որ գտնում եմ, որ դրա համար պետք է լուրջ ուսումնասիրություններ կատարել: Զուտ վիճակագրությունը ներկայացնելու համար կարող եմ ասել, որ դատարան մուտք եղած դիմումների ընդհանուր թիվը 2006 թվականին 2005 թվականի համեմատությամբ աճել է 13 տոկոսով, բայց Հայաստանից ստացվող դիմումների թիվը նույն ժամանակաշրջանում նվազել է: 2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանից ստացված դիմումների թիվն է 263: Մեր երկրից ստացված դիմումների մեծ մասը՝ շուրջ 70 տոկոսը, անընդունելի է համարվել, երկու գործով արդեն վճիռ է կայացվել, իսկ մնացած դիմումները դեռևս ընթացքի մեջ են: Կայացված վճիռներով մի դեպքում դատարանը գտել է, որ խախտվել է հանրահավաքներին և ցույցերին մասնակցելու անձի իրավունքը, իսկ մյուսով՝ որ խախտվել է արդար դատաքննության իրավունքը:

-Ինչպե՞ս կգնահատեք մարդու իրավունքների պաշտպանության ներկա վիճակը Հայաստանում, և որո՞նք են հրատապ լուծումներ պահանջող հիմնախնդիրները:

-Վերը նշված երկու դեպքում էլ իրավունքի խախտմանը նպաստել էր օրենսդրական բացը: Առաջին դեպքում՝ ցույցերի, հանրահավաքների անցկացման վերաբերյալ օրենսդրության բացակայությունը, քանի որ դատարանը գտավ, որ նախկին խորհրդային միության օրենսդրական ակտը Հայաստանի անկախության հռչակագրի և նոր Սահմանադրության պայմաններում քաղաքացու համար անկանխատեսելի էր և նա չէր կարող իմանալ, որ այն ենթակա է կիրառման, և իր վարքագիծը համապատասխանեցնել դրան: Այս առումով կարծում եմ, որ այլևս խնդիր չի ծագի, քանի որ ընդունվել է համապատասխան օրենք: Երկրորդ գործի պարագայում օրենքով նախատեսված է, որ անօրինական եղանակով ձեռք բերված ապացույցները չեն կարող օգտագործվել, բայց, իմ կարծիքով, նախատեսված չէ դրանք քրեական գործի վարույթից բացառելու կարգը, որն էլ նպաստել է խախտմանը: Այս օրինակները վկայում են, որ անհրաժեշտ է անընդհատ կատարելագործել օրենսդրությունը և, իհարկե, ուսուցանել իրավակիրառողներին:

-Ի՞նչ կարծիք ունեք ներկայումս ՀՀ-ում իրականացվող դատաիրավական բարեփոխումների մասին, և որքանո՞վ է մեր դատաիրավական համակարգի զարգացումը ընթանում եվրոպական իրավական համակարգի հետ համահունչ:

-Հավատացած եմ, որ դատաիրավական բարեփոխումների նպատակը հենց համակարգը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելն է և հուսով եմ, որ այն կծառայի նպատակին:

2006Թ.-ԻՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԿՈՒՏԱԿՎԵԼ Է ՉԲԵՆՆԱՐԿՎԱԾ 89900 ԴԻՄՈՒՄ, ՈՐԻՑ*.

Երկիրը	Ստացվել է	Ճանաչվել է ընդունելի	Խախտումներ են հայտնաբերվել	Խախուումներ չեն հայտնաբերվել	Խախտումներ են հայտնաբերվել (1999-2006)
Ռուսաստան	12241	151	96	5	197
Ռումինիա	4878	58	64	3	152
Լեհաստան	4646	111	107	8	318
Ուկրաինա	4269	131	119	1	258
Ֆրանսիա	2860	119	87	6	431
Չեխիա	2774	32	37	1	106
Թուրքիա	2353	362	312	6	1076
Գերմանիա	2217	8	6	2	53
Սլովենիա	1743	193	185	4	188
Մեծ Բրիտանիա	1608	7	10	8	141
Իտալիա	1300	79	96	5	1264
Ավստրիա	450	18	20	1	111

*Թվերը երբեմն չեն համընկնում, քանի որ որոշ գործեր լսվում են ոչ մեկ տարվա ընթացքում:

ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ՀՀ ընտրական օրենսդրության վերլուծությունը չափազանց արդիական և կարևոր է գենդերային անհամաչափության տեսանկյունից: Օրենսդրական գործընթացը պետք է հանդիսանա կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքներ և հավասար հնարավորություններ ապահովող սկզբունքի իրագործման գործընթացի անբաժան մաս: Ընտրական իրավունքում այն ստանում է ընտրելու և ընտրվելու նորմատիվ չափանիշներ: ՀՀ ընտրական օրենսգրքում կանանց ու տղամարդկանց ընտրելու և ընտրվելու հավասարության չափանիշը կասկած չի հարուցում, սակայն այդ իրավունքների իրականացման հնարավորությունները բավական խնդիրների հետ են կապված: Դե յուրե հայաստանյան կանանց քաղաքական իրավունքները պարկեշտ և բարգավաճ տեսք ունեն, դե ֆակտո այդ քաղաքական իրավունքների իրականացման առումով առկա են անբարենպաստ զարգացումներ՝ ռեալ կյանքում կանայք շարունակում են մնալ խտրականությունների ենթարկվող սոցիալ-ժողովրդագրական խումբ: Այդ խտրականությունները ներկայումս ի հայտ են գալիս հիմնականում քաղաքական այն իրավունքների իրագործման ժամանակ, որոնք անմիջականորեն կապված են քաղաքական-իշխանական համակարգերի ձևավորման հետ: Այս ամենը ապացուցվում է համեմատական վերլուծությամբ:

Հայ իրականության մեջ խորհրդարանական ավանդույթները սկզբնավորվեցին 18-րդ դարի վերջին: 1773թ.-ին Մադրասում լույս տեսավ Շ.Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատությունը, որում արտացոլվեցին Սահմանադրության և խորհրդարանական կարգի մասին դրույթները: 1918թ.-ի մայիսի 28-ին Հայաստանը հռչակվեց անկախ պետություն: Ձևավորվեց Հայաստանի խորհրդարանը, որը բաղկացած էր 82 հոգուց, որոնցից 3-ը կամ 3.66 տոկոսը՝ կանայք:

1920թ.-ի նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվեցին խորհրդային կարգեր: ՀԽՍՀ-ն Հայաստանի երկրորդ հանրապետությունն էր՝ առաջին հանրապետության իրավահաջորդը, և մտնում էր ԽՍՀՄ-ի կազմի մեջ: Այս ժամանակաշրջանում Հայաստանում գումարվել են խորհուրդների համագումարներ և Գերագույն խորհրդի նստաշրջաններ: Ընտրովի մարմիններում իրենց մշտական ներկայությունը ունեին նաև կանայք: Վերակառուցման ժամանակաշրջանի սկզբին կանայք կազմում էին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի (1984թ.-ի ընտրությունների) պատգամավորների 32.8 տոկոսը, միութենական հանրապետությունների Գերագույն խորհուրդների (1985թ.-ի ընտրությունների) պատգամավորների 36%-ը, շրջանային, գյուղական խորհուրդների (1985թ.-ի ընտրությունների) պատգամավորների 50 տոկոսը: Սակայն ընտրովի մարմինների ձևավորման համար արհեստականորեն մտցված կանանց քվոտաները չէին արտացոլում քաղաքական որոշումների ընդունման գործընթացում նրանց իրական քաղաքական մասնակցությունը և դերը: Առաջին այլընտրանքային և անկախ ընտրությունները կտրուկ նվազեցրին կանանց ներկայացվածությունը ԽՍՀՄ և Հայաստանի Գերագույն խորհուրդներում: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1988թ.-ի ընտրություններում 2250 պատգամավորական տեղերից կանայք զբաղեցրին 343-ը, որ կազմում էր ընդհանուր թվի միայն 15.6 տոկոսը:

1990թ.-ի Հայաստանի առաջին գումարման Գերագույն խորհրդում, որը կազմավորվեց 1990թ.-ին, մեծամասնական ընտրակարգով, երկու փուլով՝ մայիսի 20-ին և հունիսի 3-ին, 260 պատգամավորական տեղերից կանայք զբաղեցրեցին 9 տեղերը, որը կազմում էր ընդհանուր թվի միայն 3.46 տոկոսը: Այն մի փոքր պակաս էր Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի հետ համեմատած:

1995թ.-ի հուլիսի 5-ին տեղի ունեցած ՀՀ առաջին գումարման Ազգային ժողովի ընտրություններում 190 պատգամավորական տեղերից կանայք զբաղեցրեցին 12 տեղերը՝ ընդհանուր տեղերի 6.32 տոկոսը, որը գրեթե 3%-ով ավելի էր նախորդ ընտրությունների հետ համեմատած: 150 մեծամասնական տեղերից կանայք զբաղեցրեցին ընդամենը 4-ը, որը կազմում էր մեծամասնական ընդհանուր տեղերի ընդամենը 2.67 տոկոսը: 40 համամասնական տեղերից կանայք զբաղեցրեցին 8 տեղերը, որը կազմում էր համամասնական ընտրակարգով ընդհանուր տեղերի 20 տոկոսը:

1999թ.-ի մայիսի 30-ին տեղի ունեցած ՀՀ երկրորդ գումարման Ազգային ժողովի ընտրություններում 131 պատգամավորական տեղերից կանայք զբաղեցրեցին 4-ը՝ ընդհանուր տեղերի 3.05 տոկոսը, որը 3.27 տոկոսով պակաս էր նախորդ ընտրությունների հետ համեմատած: 75 մեծամասնական տեղերից կանայք զբաղեցրեցին ընդամենը 1-ը, որը կազմում էր մեծամասնական ընդհանուր տեղերի ընդամենը 1.33 տոկոսը՝ նախորդ ընտրությունների հետ համեմատած գրեթե 2 անգամ պակաս: 56 համամասնական տեղերից կանայք զբաղեցրեցին 3 տեղերը, որը կազմում էր համամասնական ընտրակարգով ընդհանուր տեղերի 5.36 տոկոսը՝ նախորդ ընտրությունների հետ համեմատած գրեթե 4 անգամ պակաս:

2003թ.-ի մայիսի 25-ին տեղի ունեցած ՀՀ երրորդ գումարման Ազգային ժողովի ընտրություններում 131 պատգամավորական տեղերից կանայք զբաղեցրեցին 7-ը՝ ընդհանուր տեղերի 5.34 տոկոսը, որը 2.29 տոկոսից ավելի էր նախորդ ընտրությունների հետ համեմատած: 56 մեծամասնական տեղերից կանայք զբաղեցրեցին ընդամենը 1-ը, որը կազմում էր մեծամասնական ընդհանուր տեղերի ընդամենը 1.79 տոկոսը՝ նախորդ ընտրությունների հետ համեմատած՝ մի փոքր ավելի: 75 համամասնական տեղերից կանայք զբաղեցրեցին 6 տեղերը, որը կազմում էր համամասնական ընտրակարգով ընդհանուր տեղերի 8 տոկոսը՝ նախորդ ընտրությունների հետ համեմատած գրեթե 2.64 տոկոսով ավելի:

2007թ.-ի մայիսի 12-ին տեղի ունեցած ՀՀ չորրորդ գումարման Ազգային ժողովի ընտրություններում 131 պատգամավորական տեղերից կանայք զբաղեցրեցին 12-ը՝ ընդհանուր տեղերի 9.16 տոկոսը, որը 3.82 տոկոսից ավելի էր նախորդ ընտրությունների հետ համեմատած: 41 մեծամասնական տեղերից կանայք ոչ մի տեղ չզբաղեցրին: Նախորդ ընտրությունների ժամանակ կանայք ունեին 1 պատգամավորական մանդատ, որը կազմում էր մեծամասնական ընդհանուր տեղերի 1.79 տոկոսը: 90 համամասնական տեղերից կանայք զբաղեցրեցին 12 տեղերը, որը կազմում էր համամասնական ընտրակարգով ընդհանուր տեղերի 13.33 տոկոսը՝ նախորդ ընտրությունների հետ համեմատած գրեթե 5.33 տոկոսով ավելի:

ՀՀ խորհրդարանական ընտրությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ կանանց ներկայացուցչությունը ՀՀ հինգ գումարումների խորհրդարաններում մնում է բավական ցածր սահմանագծում, մասնավորապես, 1990թ.-ի համեմատ այն աճել է ընդամենը 5.7 տոկոսով և ներկայումս կազմում է խորհրդարանի պատգամավորների ընդհանուր թվի ընդամենը 9.16 տոկոսը: Համեմատության համար պետք է նշել նաև մեր հարևան չորս երկրների ցուցանիշները: Մեր հարևան պետություններից Ադրբեջանում կանայք կազմում են խորհրդարանի պատգամավորների ընդհանուր թվի 11.3 տոկոսը, Վրաստանում՝ 9.4 տոկոսը, Թուրքիայում՝ 4.4 տոկոսը և Իրանում՝ 4.1 տոկոսը: Ազգային Ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրված կանանց թվաքանակի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ չորրորդ գումարման Ազգային Ժողովի կանանց թվաքանակը դարձել է զրոյական ՀՀ առաջին գումարման Ազգային Ժողովի կազմի (2.67 տոկոս կամ 4 կին) հետ համեմատած: Նվազումը կազմել է 2.67 տոկոս: Ազգային Ժողովի համամասնական ընտրակարգով ընտրված կանանց թվաքանակի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ չորրորդ գումարման Ազգային Ժողովի կանանց թվաքանակը (12 կին) ավելացել է ՀՀ առաջին գումարման Ազգային Ժողովի կազմի (8 կին) հետ համեմատած, սակայն տոկոսային առումով (13.33 տոկոսը) նվազել է ՀՀ առաջին գումարման Ազգային Ժողովի կազմի (20 տոկոս) հետ համեմատած: Սակայն, ՀՀ

առաջին գումարման Ազգային Ժողովի կազմի համամասնական ցուցակով պատգամավորական մանդատ ստացած կանայք բոլորը պատգամավորական մանդատները ստացել էին ընդամենը մեկ՝ «Շամիրամ» հասարակական քաղաքական կազմակերպության ընտրացուցակով, իսկ ՀՀ չորրորդ գումարման Ազգային Ժողովի կազմի համամասնական ցուցակով պատգամավորական մանդատ ստացած կանայք այդ մանդատները ստացել էին ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի, ՀՅԴ-ի, «Ժառանգություն» կուսակցության և ՕԵԿ-ի ընտրացուցակներով:

ՀՀ չորրորդ գումարման Ազգային Ժողովի ընտրությունների բոլոր կուսակցությունների համամասնական ցուցակների վերլուծությունը ցույց է տալիս, որ գրեթե բոլոր կուսակցությունների համամասնական ցուցակներում առկա են ՀՀ ընտրական օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-րդ մասի «…ընդ որում, ընտրական ցուցակի առնվազն յուրաքանչյուր տասներորդը պետք է լինի կին» պահանջի բազմաթիվ խախտումներ, քանի որ կուսակցությունները և ՀՀ կենտրոնական հանձնաժողովը սխալ են ընկալել, մեկնաբանել և կիրառել օրենքի վերոհիշյալ դրույթի պահանջը: Օրենքը պահանջում է, որ եթե կուսակցության համամասնական ցուցակում, օրինակ, կինը հինգերորդ համարն է զբաղեցնում, ապա հաջորդ կինը պետք է զբաղեցնի առնվազն տասնհինգերորդ համարը, անկախ այն հանգամանքից, թե այդ ցուցակում, բացի հինգերորդ համարը զբաղեցնողից, կին է նաև, օրինակ, երրորդ համարը զբաղեցնողը:

Անդրադառնալով կառավարությունում և ՏԻՄ-երում կանանց ներկայացվածության խնդրին՝ պետք է նշել, որ ՀՀ 16 նախարարներից միայն մեկն է կին՝ մշակույթի նախարարը կամ նախարարների ընդհանուր թվի 6.25 տոկոսը, իսկ 926 քաղաքապետերից և գյուղապետերից միայն 16-ն են կանայք կամ դրանց ընդհանուր թվի 1.73 տոկոսը:

Ինչպես ցույց են տալիս վերը նշված տվյալները՝ գենդերային անհամաչափությունը ակնհայտորեն արտահայտվում է օրենսդիր, գործադիր և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգերում կանանց ներկայացուցչության մակարդակի նվազումով: Կանանց ընդունակությունների ու պատրաստվածության օբյեկտիվ գնահատականը վկայում է, որ հաճախակի ունենալով ավելի բարձր կրթություն, քան տղամարդիկ՝ կանայք լիարժեքորեն չեն տիրապետում ընտրական տեխնոլոգիաներին, չունեն հատուկ գիտելիքներ քաղաքագիտության, պետական կառավարման և իրավունքի բնագավառներում: Այստեղ տեղին է նշել, որ այս ամենի մեջ իր մեղքի բաժինը ունի նաև հայաստանում կանանց շարժման մասնատվածությունը:

ՀՀ կառավարման բուրգի ներկայիս իրավիճակը չի արտացոլում հասարակական ուժերի իրական պատկերը, կանանց և տղամարդկանց նոր դերակատարումները, հասարակության, պետության, ընտանիքի գործերի վրա ազդելու կանանց հնարավորությունները, ինչպես նաև թույլ չի տալիս ապահովել հասարակության զարգացման և ժողովրդավարացման ճիշտ սոցիալական կողմնորոշում: Փաստորեն՝ ՀՀ 52 տոկոս մեծամասնությունը որոշում կայացնելու գործընթացում ունի ընդամենը ինը տոկոս ներկայացվածություն:

Ելնելով վերոհիշյալ վերլուծությունից, տղամարդկանց ու կանանց միջև փաստական իրավահավասարության սահմանման արագացմանն ուղղված ժամանակավոր հատուկ միջոցների ընդունման և օրենսդրության գենդերային զգայունությունը բարձրացնելու միջազգային փորձից՝ ՀՀ Ընտրական օրենսգրքում անհրաժեշտ է կատարել փոփոխություններ և լրացումներ: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-րդ մասը անհրաժեշտ է շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «Յուրաքանչյուր կուսակցություն իրավունք ունի առաջադրել պատգամավորության թեկնածուների միայն մեկ ցուցակ: Կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունն իրավունք չունի իր անունից թեկնածուների առանձին ցուցակ առաջադրել: Ազգային ժողովի՝ համամասնական ընտրակարգով կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ներկայացրած ընտրական ցուցակում միևնույն սեռի ներկայացուցիչներ կարող են լինել թեկնածուների ընդհանուր թվի 70 տոկոսից ոչ ավելին, ընդ որում, ընտրական ցուցակի յուրաքանչյուր տասնյակում: Համամասնական ընտրակարգով կուսակցության ներկայացրած ընտրական ցուցակում կարող են ընդգրկվել նաև անկուսակցականներ» , իսկ նույն օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ի մասում անհրաժեշտ է ավելացնել նոր՝ 3-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ. «Կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) խախտել է ՀՀ ընտրական օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները»: Այս ամենը թույլ կտա երկրի խորհրդարանում ավելացնել կանանց ներկայացվածությունը, իսկ ընտրական օրենսգրքի պահանջները չկատարող կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի գրանցումը կմերժվի ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից:

ԿԱՐԵՆ ՉԱԴՈՅԱՆ
«ԼԻԳԼ ԸԼԱՅԸՆՍ» իրավաբանական ընկերության
կառավարող գործընկեր, ՄԱԿ-ի փորձագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԳՈՒՄԱՐՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՊԱՏԿԵՐ

Հայաստանի 3-րդ հանրապետության խորհրդարանները	Պատգ. ընդհանուր քանակը	Մեծամասն. ընտրական համակարգ	Համամասն. ընտրական համակարգ	Կին պատգ. ընդհանուր քանակը	Մեծ. ընտր. ընտրված կին պատգ. քանակը	Համ. ընտր. ընտրված կին պատգ. քանակը
1990թ.-ի ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհուրդ	260	260	0	9 / 3.46%	9 / 3.46%	0
1995թ.-ի ՀՀ առաջին գումարման Ազգային ժողով	190	150	40	12 / 6.32%	4 / 2.67%	8 / 20%
1999թ.-ի ՀՀ երկրորդ գումարման Ազգային ժողով	131	75	56	4 / 3.05%	1 / 1.33%	3 / 5.36%
2003թ.-ի ՀՀ երրորդ գումարման Ազգային ժողով	131	56	75	7 / 5.34%	1 / 1.79%	6 / 8%
2007թ.-ի ՀՀ չորրորդ գումարման Ազգային ժողով	131	41	90	12 / 9.16%	0 / 0%	12 / 13.33%

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ

Հնդկաստանի Ութար Պրադեշ նահանգի Տերայ շրջանում կիրառվում է ամուսնալուծության հնագույն սովորույթը, ըստ որի, ամուսնալուծման որոշում կայացնելու իրավունքը վերապահվում է միայն կնոջը: Այդ հարցում ամուսինը ոչ մի դեր չի խաղում: Ամուսնալուծության գործողությունը շատ պարզ և հասարակ է: Եթե կինը որոշել է թողնել ամուսնուն, ապա պետք է հասարակական վայրում սոսի ծառ տնկի և նրա շուրջը երեք անգամ պտտվելուց հետո բնի վրա ատամներով երկու քերծվածք առաջացնի: Դրանից հետո նա արդեն ազատ է համարվում և կարող է ուրիշի հետ ամուսնանալ:

Իտալական Պեսկարա քաղաքի բնակչուհի Էլիզա Սպինելլին գողության համար դատապարտվեց մի քանի ամսվա բանտարկության: Բայց դատավճիռը ի կատար չի ածվել:
Բանն այն է, որ Իտալիայում արգելվում է հղի և կրծքով կերակրող կանանց բանտարկել:

Ամենակարճ հաստատված կտակն աշխարհում կազմվել է չեխերեն՝ Հեր Կարլ Թաուխի կողմից Գերմանիայում, 1967 թվականի հունվարի 19-ին՝ «Բոլորը կնոջս»:

Ամենակարճ կտակը, որ մերժվել և հետո վավերացվել է անգլիական օրենքով, Թորն Դիքընսի կտակն է, 1906 թվականին: Այն պարունակում էր երկու բառ՝ «Բոլորը մորս», որտեղ «մայրը » իր մայրը չէ, այլ՝ կինը:

Ֆրանսիացի կոմսուհի Էլիզաբեթ Անժելիկա դե Բուտվիլը (1607-1696) 20 տարեկանում այրիացավ: Նրա սիրեցյալ ամուսինը՝ նահանգապետ Սենլիսը կտակ էր թողել, ըստ որի, առաջին տարին այրիության համար նրան վճարվեց մեկ ոսկեդրամ: Իսկ համաձայն պայմանի, եթե նա չամուսնանար, ամեն հաջորդ տարի կստանար նախորդից 2 անգամ ավելի ոսկեդրամ:
Կոմսուհին դրանից հետո ապրեց ևս 89 տարի, սակայն նորից չամուսնացավ: Այդ ժամանակ, ըստ իրավունքի, ստացավ 147575952314798506772 ոսկեդրամ, որը հավասարազոր է 737 կվինտիլիոն (1017) այժմյան դոլարին:

- Մեղադրյալ, ինչու՞ եք դուք ոտնձգել ձեր կնոջ կյանքի նկատմամբ՝ փոխանակ սպանելու նրա սիրեկանին:
- Իսկ ես դատեցի այսպես. ավելի խելացի կլինի ոչնչացնել մի կնոջ, քան ամեն շաբաթ սպանել մի սիրեկանի:

-Քեզ չեմ հասկանում,- ասում է փաստաբանը իր պաշտպանյալին:- Հազիվ էիր բանտից ազատվել գողության համար տրված ժամկետից, բայց գնում ես ու ծեծում թերթի խմբագրին:
-Գիտես, երբ ես հազար մարկ էի գողացել , էդ սրիկան գրել էր, թե գողացել եմ երեք հազար: Եվ այդ պատճառով կնոջս հետ անախորժ վեճեր եմ ունեցել:

Դատավորը հարցնում է օտարերկրացուն դատավարությունն ավարտելուց հետո.
-Ձեր վերջին ցանկությունը:
-Ինձ տալ թարգմանիչ, որպեսզի պարզեմ, թե ինձ ինչ դատավճիռ եք կայացրել:

Ամենաերկար կտակը կազմել է միսիս Ֆրեդերիքա Էվելին Սթիլուել Քուքը (ԱՄՆ-ում), որը հաստատվել է 1925 թվականի նոյեմբերի 2-ին՝ Լոնդոնում, Սոմերսեթ Հաուզում: Այն ընդգրկում էր չորս հատոր՝ բաղկացած 95 940 բառից:

1974 թվականից շվեդական ընտանիքներին հնարավորություն է տրված իրենց մեջ որոշելու, թե ծնողներից ո՞ր մեկը՝ հա՞յրը, թե՞ մայրը, պետք է վեցամսյա արձակուրդ ստանա նորածին երեխային խնամելու համար: Ստոկհոլմում, որտեղ այս նոր օրենքը մտցնելուց հետո առաջին տարում 10.913 երեխա է ծնվել, 105 դեպքերում «դեկրետային արձակուրդ» են վերցրել հայրիկները:

Տեխասում օրենքը հանցագործին հարկադրում է կատարվելիք հանցագործության մասին բանավոր կամ գրավոր նախազգուշացնել այն իրագործելուց 13 ժամ առաջ:

-Ինչու՞ է այդ տիպը ամեն պարից հետո թաշկինակով սրբում իր պարընկերուհու մեջքը:
-Ա, դա գող էդին է: Հին սովորություն է. չի ուզում մատնահետքեր թողնել:

1885 թվականին ֆրանսիացի մի բանկիր մահվան շեմին թողել է իր կտակը, որի մեջ կար հետևյալ պայմանը. «Իմ ժառանգորդը պարտավոր է իրեն կտակված իմ կարողությունից ինձ հատկացնել 20 հազար ֆրանկ, ինքն էլ իմ աճյունի հետ գերեզման իջնել»: Ժլատ ժառանգորդը մի քանի օր մտածել է, թե ինչպես խուսափի նշված պայմանի կատարումից, և ի վերջո ելքը գտել է: Հուղարկավորության օրը նա աճյունի վրա է դրել 20 հազար ֆրանկ արժողությամբ չեկը, և, որ դրանից ոչ ոք չկարողանա օգտվել, չեկի վրա հանգուցյալի անունը և ազգանունը գրվել են խոշոր տառերով:

Կտակը կազմելիս հիվանդը փաստաբանին խնդրեց գրի առնել իր վերջին ցանկությունը՝ իրեն թաղել սեփական ավտոմեքենայի հետ միասին: Ինչքան էլ փաստաբանն ու կինը ջանացին համոզել նրան՝ չստացվեց:
- Բանն այն է,- վերջապես խոստովանեց հիվանդը,- որ մինչ այժմ չի եղել այնպիսի մի փոս, որտեղից ես չկարողանամ դուրս պրծնել իմ ֆորդով:

Վարորդը բացատրություն է տալիս դատարանում.
- Ճիշտ է, ընկեր դատավորներ, ես ուշադրություն չեղել եմ, բայց բանը նրանում է, որ իմ ճանապարհը կտրեց մի կատու:
-Իսկ ինչպիսի՞ն էր այդ կատուն:
-Կտրված պոչով:
- Այո, դա պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք է…

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Հեռ.՝ (374 10) 54-01-99
ֆաքս՝ (374 10) 58-02-99
Էլ.փոստ՝ legalnewsletter@ayla.am

Լրատվական գործունեություն իրականացնող՝

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ

Հասցե՝ ք. Երևան,
Նալբանդյան 7, բն. 2

Պետական գրանցման վկայականի համարը՝
03Ա 057970, տրված՝ 27.12.2002 թ.

Թողարկման պատասխանատու և խմբագիր՝
Նարինե Կարապետյան

«ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԼՐԱՏՈՒՆ» ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ

Տպաքանակը՝ 500 օրինակ
Ծավալը՝ 1 տպ. մամուլ
Ստորագրված է տպագրության
13.07.2007թ.

Տպագրվում է 2006թ. հունիսից